

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՆ 60 ՏԱՐԵԿԱՆ Է*

ՖԱԳԵՑ ՍԱՐԿՍՅԱՆ

Այսօր մեր ժողովուրդը մեծագույն բերկրանքով տոնում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փառապանծ 60-ամյակը:

Մեր ժողովրդի հազարամյակների մշակութային պատմության մեջ, իհարկե, 60 տարին մի ակնթարթ է միայն, սակայն այն իր մեջ է խտացրել ժողովրդի հանճարի դրսևորման, գիտության բնագավառում հերոսական սաքառումների և որոնող մտքի հեղափոխական ընդլայնման անսանձ կիրքն ու ոգին: Եվ XX դ. այս 60 ակնթարթներում մեր ժողովուրդը, ինչպես կասեր հանճարեղ պոետը, «թեև թեև ի ետևից» իր ստեղծագործ մտքի գոհարների պատկառելի մի ամբողջություն ամբարեց Գիտության այս կաճառում:

Ստեղծվելով պատերազմի ահեղ և ամենածանր օրերին՝ 1943 թ. նոյեմբերին, Գիտությունների ակադեմիան ամենակարճ ժամանակամիջոցում դարձավ ոչ միայն գիտական մտքի զարգացման բարձրագույն կառույց, այլև իր շուրջը համախմբեց ողջ մտավորականությունը՝ ձևավորվելով որպես մեր ժողովրդի և երկրի մտավոր տաճարի խորհրդանիշ:

Անցած տարիների ընթացքում Ակադեմիան Հիմնարար գիտության բնագավառում իրականացրած իր հետազոտություններով և գիտական մշակումներով լրջագույն ավանդ ներդրեց ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային գիտության զարգացման բնագավառում, որով էպպես նպաստեց համայն մարդկության քաղաքակրթության հետագա առաջընթացին:

Հիմնադրման առաջին իսկ օրից Ակադեմիայում ձևավորվեցին Հայաստանի բարձրագույն գիտական հաստատությանը արժանի ավանդույթներ ու գիտական ուղղություններ, որոնք այսօր մեր երկրում գիտատեխնիկական, կրթական և հոգևոր ներուժի բարձր մակարդակի պահպանման ու զարգացման գլխավոր պայմանը և գրավականն են:

Առանձնապես բուռն զարգացում ապրեց Գիտությունների ակադեմիան հետպատերազմյան տարիներին, երբ մեկը մյուսի ետևից սկսեցին ձևավորվել նորագույն գիտական հաստատություններ, լաբորատորիաներ, գիտական ուղղություններ, ստեղծվեց նյութատեխնիկական հզոր բազա և դրանց զուգընթաց՝ մեծ թափ ստացավ գիտական կադրերի պատրաստումը:

* Զեկուցում կարդացված ՀՀ ԳԱԱ 60-ամյակին նվիրված հոկտեմբերի 9-ի նիստում:

Այս ամենն իր հզոր անդրադարձն ունեցավ մեր հանրապետության դիմանկարի վերջնական ձևավորման վրա, որը նախկին ազրարային և տնայնապորձական արտադրություն և, միևնույն ժամանակ, հանճարեղ անհատներ ունեցող երկրից դարձավ զարգացած դիտություն, տեխնոլոգիաների և մշակույթի երկիր՝ համարձակորեն ներքաշվելով համաշխարհային քաղաքակրթության առաջընթացը ձևավորող երկրների համաստեղության մեջ:

Թող անհամեստություն չլինի ասել, որ լինելով փոքր պետություն՝ Հայաստանը համարձակորեն ներխուժեց մեծ գիտության, բարձր տեխնոլոգիաների և համամարդկային մշակույթի աշխարհը և արժանին հատուցեց տշխարհի մտավոր դանձարանին: Աստղագիտությունը, մաթեմատիկան, ֆիզիկան, մեխանիկան, հրկրաբանությունը, քիմիան, կենսաբանությունը, բժշկագիտությունը, պատմությունը, հնագիտությունը, արվեստագիտությունը և գիտության այլ ուղղություններ զարգացան և ասլրեցին աննախընթաց վերելք:

Մենք այսօր հպարտությամբ ենք արձանագրում, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամներ են եղել այնպիսի երևելի անհատականություններ, ինչպիսիք էին Հովսեփ Օրբելին, Վիկտոր Համբարձումյանը, Լևոն Օրբելին, Աբրահամ Ալիխանովը, Արտեմ Ալիխանյանը, Ավետիս Իսահակյանը, Արամ Խաչատրյանը, Մարտիրոս Սարյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Արմեն Թախտաջյանը, Էզրաս Հասրաթյանը, Լևոն Հովհաննիսյանը, Բորիս Պիտարովսկին, Նորայր Ափսակյանը, գիտության և մշակույթի առաջին մեծության աստղեր, որոնցից յուրաքանչյուրը կարող էր աշխարհի ցանկացած ակադեմիայի կամ գիտական կենտրոնի պարծանքը հանդիսանալ:

Գիտությունների ակադեմիան իր 60-ամյա պատմության ընթացքում ունեցել է 189 ակադեմիկոս, 39 քառասահմանյան անդամ, 16 պատվավոր անդամ:

Պատվավոր անդամների թվում են այնպիսի աշխարհահռչակ դեմքեր, ինչպիսիք են ակադեմիկոսներ Մստիսլավ Կելդիշը, Անատոլի Ալեքսանդրովը, Ալեքսանդր Նեսմեյանովը, Ծովակալ Հովհաննես Իսակովը, Սերգեյ Վավիլովը, Բորիս Պատոնը, Յուրի Օսիպովը և գիտության այլ կարկառուն ներկայացուցիչներ:

Արտասահմանյան անդամներից մեր Ակադեմիան զարգարում են հանրահռչակ նկարիչներ Գառուեն և Ժանսեմը, Ֆիզիոլոգ Մասսո Իտոն, կենսաքիմիկոս Աբել Լայթան, ճարտարապետ-պատմաբան Պաոլո Կունենոն, բանասեր Ժան-Պիեռ Մահեն, մաթեմատիկոս Արմեն Մուլաֆյանը, բժշկական և կենսաբան Առնոլդ Նիկոզոսյանը և մի շարք այլ երևելիներ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմությունը երկրի ժողովրդական տնտեսության, սոցիալական և մշակութային ոլորտների, պաշտպանունակության զարգացման գործում գիտության բոլոր ուղղությունների առաջատար դերի պատմությունն է:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, հատկապես առաջին տարիներին, Ազգային ակադեմիայի գերխնդիրը դարձավ գիտական ներուժի պահպանման ուղղությամբ ծավալած անզլընում պայքարը:

1991 թ. Խորհրդային Միության փլուզումը, նորանկախ երկրների կազմավորումը, բազմակողմ տնտեսական, գիտական, մշակութային և այլ կապերի թուլացումը կամ խզումը, տնտեսության բնագավառում սկսված արմատական վերափոխումները Հայաստանի Հանրապետության կենսագործունեության բոլոր ոլորտներում հանգեցրին խորը ճգնաժամի:

Աղետալի երկրաշարժի, Հայաստանի տեղական շրջափակման, սուր էներգետիկական ճգնաժամի և լրջորեն չմտածված, գիտականորեն չհիմնավորված մի շարք վերակազմավորումների հետևանքով խիստ թուլացավ տնտեսությունը, տուժեցին հասարակության բարոյական հիմքերը, աճեց և խորացավ սոցիալական բեռնացումը: Այս ամենն իրական նախադրյալներ ստեղծեց գիտական ներուժի տրոհման և էական կրճատման համար: Գիտության և առաջին հերթին հիմնարար գիտության համար նախատեսվող ֆինանսավորման ծավալների կտրուկ կրճատումը Ակադեմիան կանգնեցրին հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում առաջատարի իր դերը կորցնելու վտանգի առջև: Այս համատեքստում ակտիվ քննարկումներ ծավալվեցին ընդհանրապես գիտության և մասնավորապես ակադեմիական գիտության ճակատագրի շուրջը:

Ակադեմիայի և հիմնարար գիտության պահպանման բուն փաստը, հատկապես անկախության առաջին տարիներին, մեկ անդամ էլ, որ կասկածի տակ է դրվել: Դիտարկվում էին գիտության ոլորտում արմատական վերակառուցումների այնպիսի հնարավորություններ, որոնք կարող էին ունենալ աղետալի հետևանքներ ոչ միայն Ակադեմիայի, այլև գիտության զարգացման համար առհասարակ: Նման մոտեցումը հանգեցրեց նրան, որ Ակադեմիան զրկվեց հիմնարար գիտության բնագավառում միասնական քաղաքականություն վարելու, իր ներուժի նպատակաուղղված վերակոմունորոշումն ապահովելու, նոր գիտական ուղղություններ նախանշելու, ինստիտուտներին կազմակերպական և ֆինանսական գործունե աջակցություն ցուցաբերելու, որոնողական հետազոտությունները խթանելու հնարավորություններից:

Գիտության նկատմամբ նման քաղաքականությունն ավելի խճճեց իրավիճակը գիտատեխնիկական ոլորտում: Տնտեսական անկումը, կառավարման համակարգերի վերակառուցումը, գիտական աշխատանքի հեղինակազրկվելը, գիտնականների նյութական հնարավորությունների տարալուծումը, գիտության ֆինանսական և նյութական բազայի կրճատումը, «տեղեկատվական քաղցը», «ուղեղների արտահոսքը», գիտական հետազոտությունների պահանջարկի բացակայությունը հրամայաբար առաջադրեցին գիտության զարգացման ռազմավարության ընտրության հիմնախնդիրը:

Այս պարագաներում Ակադեմիայի կարևորագույն խնդիրը դարձավ նրա ակտիվ մասնակցությունը գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության արգի նպատակներին համապատասխանող օրենսգրքական գաշտի մշակմանը:

Ակադեմիայի նախաձեռնություններով և անմիջական մասնակցությամբ նախապատրաստվեց և 1993 թ. հրապարակվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը Ակադեմիայի վերաբերյալ: Վերջինս վերանվանվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային

ակադեմիայի՝ ինքնավար գիտական հիմնարկի կարգավիճակով, որն իրականացնում և համակարգում է հանրապետության հիմնարար գիտական հետազոտությունները և կատարում փորձաքննություն հիմնարար գիտության բնագավառում: Սկզբունքային կարևորություն ունեւ այն դրույթը, ըստ որի ՀՀ գիտությունների ազդային ակադեմիան ճանաչվում էր որպես Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական գիտական խորհրդատու: Այդ փաստաթուղթը, որի ընդունումը պայմանավորված էր դիտական ներուժը պահպանելու, հիմնարար հետազոտությունների զարգացման համար պայմաններ ստեղծելու, հանրապետության տնտեսության զարգացման գործում գիտության դերը բարձրացնելու անհրաժեշտությամբ, ապահովեց Ակադեմիայի ամբողջականության և նրա վարչական միասնության պահպանումը:

Հրամանագիրը, որն այդ տարիներին գիտության վերաբերյալ միակ օրենսդրական ակտն էր, հետագայում էական ազդեցություն չթողեց Ակադեմիայի և ընդհանրապես հիմնարար գիտության վիճակի վրա: Փաստաթղթում չըջանցված էր Ակադեմիայում կատարվող հետազոտությունների ֆինանսավորման համակարգի և ծավալի մասին սկզբունքային հարցը: Մի շարք կարևորագույն դրույթներ կարիք ունեին ճշգրտման: Այնուհետև տարիներ շարունակ, գիտության օրենսդրական դաշտը չզարգացավ: Օրենսդրական ձևակերպում չստացան Գիտությունների ազգային ակադեմիայի մշակած գիտության զարգացման հայեցակարգը, գիտության դեկարինան և մի շարք այլ հայեցակարգային փաստաթղթեր: Իրագործությունները ստիպեցին կրկին հիմնավորել, որ Ակադեմիան գիտական կազմակերպությունների համակարգ է, որի գործունեության արդյունքները կարող են և պետք է արդյունավետորեն օգտագործվեն մեր նոր պետականության շինարարության մեջ: Այդ վիթխարի մտավոր ներուժը ստեղծվել է շատ տասնամյակների ընթացքում: Լուծարել Ակադեմիան, հրաժարվել հիմնարար գիտությունից, նշանակում է աններելի սխալ կատարել, ինչը Հայաստանն ընդմիջտ կնետեր հետամնաց երկրների կարգը:

Այսպիսի սուր պայմաններում Ակադեմիայի գործունեության ծրագիրը նախատեսում էր յուժեղ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին Ակադեմիայի ներդրավելը միջազգային և ներհանրապետական գիտական համագործակցության մեջ, հիմնարար հետազոտությունների թեմատիկայի վերանայումն ու ճշգրտումը՝ գերակա ուղղությունների առանձնացմամբ, գիտական կարգերի վերարտադրությունը, գիտության կառավարման համակարգի բարելավումը, գիտության զարգացման օրենսդրական դաշտի ստեղծմանն աջակցելը և այլն: Առաջնահերթ խնդիրներից մեկը ակադեմիային էր՝ մասնավորապես միջազգային կապերն ընդարձակելու ճանապարհով:

Ակադեմիային օգնեց միջազգային դիտական հիմնադրամների, միջազգային հայկական և այլ բարեգործական կազմակերպությունների ու առանձին հովանավորների հետ ընդլայնվող համագործակցությունը: Ակադեմիայի գիտնականները սկսեցին ավելի շատ դրամաշնորհներ շահել միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, գիտական աշխատությունների հրատարակման, նոր գիտական սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում: Դրանց շնորհիվ ապահովվեցին

մի շարք ինստիտուտների գիտական սարքավորումների, կապի և գիտական հետադուրսությունների հետ կապված այլ հարցեր: Այսպես, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի միջոցների հաշվին ձեռք բերվեցին գիտական սարքավորումներ, հրատարակվեցին գիտական աշխատություններ, արգիականացվեցին տպագրական միջոցները, Ակադեմիայի նախագահություն և մոտակա գիտական կազմակերպությունների կաթսայատունը և այլն: Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի և Հայ բարեգործական ընդհանուր միությունից զգալի օգնություն շնորհիվ Ակադեմիան ստացավ ժամանակակից համակարգչային և այլ տեխնիկական միջոցներ:

Հայոց եկեղեցին մշտապես հոգացել և հովանավորել է գիտությունը և մշակույթը: Միանգամայն օրինաչափ է, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսը, ինչպես և նրան նախորդած Վազգեն Առաջին և Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսներն ընտրվել են ՀՀ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոսներ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան միշտ մեծ երախտագիտություն է ցուցաբերում կնչի մի շարք կազմակերպությունների զգալի օգնությունը և առանձին անձանց՝ Լուիզ Աիմոն Մանուկյանի, Միքայել Եսայանի, Զավեն Եկավյանի, Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, Արա Աբրահամյանի, Հրանտ Վարդանյանի, Լևոն Զախմախչյանի, Սենիկ Գևորգյանի անունները, որոնք հայկական գիտության համար ծանր ժամանակներում ակտիվ մասնակցություն ունեցան օգնության բազմաթիվ ծրագրեր իրականացնելու գործին:

Հայաստանի գիտության համար շատ լուրջ ձեռքբերում էր ակադեմիական համակարգչային տեղեկատվական ցանցի ստեղծումը: Այդ տարիներին քաղաքական իրավիճակը և այլ գործոնները թուլատրում էին արագորեն տեղեկատվություն ստանալ միմիայն Ինտերնետի միջոցով: ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի աշխատանքները թույլ տվեցին ապահովել ինստիտուտների ելքը դեպի Ինտերնետ: Կառավարության, հայկական բարեգործական կազմակերպությունների և միջազգային դրամաշնորհների օժանդակությամբ հաջողվեց մի քանի տարվա ընթացքում ստեղծել ՀՀ ԳԱԱ համակարգչային տեղեկատվական ցանց: Այնուհետև Ակադեմիայի համակարգում կազմակերպվեց տվյալների փոխանակման ցանց, ստեղծվեցին ինստիտուտների տեղային ցանցեր:

Սոցիալ-տնտեսական դժվար պայմաններում Ակադեմիայի կարևորագույն խնդիրն է միասնական գիտատեխնիկական քաղաքականության հիման վրա հանրապետության տնտեսության վերակառուցման և զարգացման, գիտատարողունակ արտադրանքի վրա կենտրոնացման, տնտեսական աճի խթանման միջոցով ապահովել կենսամակարդակի բարձրացման, երկրի ազգային անվտանգության ապահովման գործին ակտիվորեն մասնակցելը:

Գիտության բնագավառում անհրաժեշտ են նպատակաուղղված, ծրագրային վերափոխումներ՝ առաջին հերթին գիտատեխնիկական ոլորտում գերակայությունների որոշումը, մրցույթների հիման վրա հիմնարար հետազոտությունների, գիտատեխնիկական ծրագրերի կազմման, ինչպես նաև տնտեսության տարրեր ճյուղերում հետազոտությունների արդյունք-

ների արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը:

Ակադեմիայի կողմից ՀՀ կառավարության քննարկմանը պարբերաբար ներկայացրած առաջարկությունների փաթեթներն արտացոլում են հանրապետության գիտատեխնիկական ներուժի, կառուցվածքի արմատական վերափոխման ուրվագիծը, նրա դերը պետության զարգացման մեջ, նրա պահպանումն ու զարգացումը:

Անցումային շրջանի պայմաններում հստակ կողմնորոշիչների բացակայությունը, երբ չեն ձևավորվել Հայաստանի տնտեսության և սոցիալական ոլորտի վերափոխումների հիմնական ուղղությունները, չեն կատարելագործվել գերակայությունների ընտրման մեխանիզմները, թույլ չտվեց մշակել նոր հետադոտությունների արդյունքների ներդրման վերջնական մեխանիզմներ:

Ակադեմիայի առաջարկությունները, ընդհանուր առմամբ, պահանջարկ չունեին, թեև որոշ առաջարկություններ, օրինակ՝ էներգետիկայի, ինֆորմատիկայի, երկրաբանության, կենսատեխնոլոգիայի, շրջակա միջավայրի պահպանության, Սևանի հիմնախնդիրների գծով, կյանքի կոչվեցին: Հետաքրքիր և ուսանելի է այն փաստը, որ Ակադեմիայի որոշ նորարարություններ հաջողությամբ ներդրվեցին արտասահմանում:

Հայաստանի գիտության զարգացման ճանապարհին էական խոչընդոտ էր գիտության վերաբերյալ հստակ օրենսդրական դաշտի բացակայությունը: Հենց այս պատճառով 1990-ական թվականների վերջերին տնտեսական իրավիճակի կայունացման նշմարվող միտումը պետությանը դրդեց առավել ակտիվորեն որոնելու հանրապետության տնտեսական համալիրի արդյունավետ վերակառուցման ուղիներ, որտեղ անվիճելի է գիտության առաջատար դերը: Սկսվեց այն պարզ ճշմարտության գիտակցման գործընթացը, որ գիտությունը ազգային սեփականություն է, տնտեսական և սոցիալական առաջադիմության հիմք, երկրի ազգային անվտանգության ապահովման առաջնային գործոն: Իր պատմության այս փուլում Ակադեմիան շարունակում էր ակտիվորեն աշխատել գիտության մասին օրենքի նախագծի վրա, որը պետք է իրավական դաշտ ստեղծեր միասնական գիտատեխնիկական քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացի համար: Օրենքի կարևորագույն խնդիրներից մեկը գիտության կայուն ֆինանսավորման հարցի լուծումն էր: Ինչպես ցույց էր տվել փորձը, միայն թեմատիկ ֆինանսավորմամբ հնարավոր չէ լուծել ինստիտուտների կենսագործունեության ապահովման, եզակի սարքավորումների արդյունավետ շահագործման կազմակերպման, որոնողական հետազոտությունների իրականացման և այլ խնդիրներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2000 թ. ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում նշված է, որ գիտատեխնիկական ներուժի պահպանումն ու զարգացումը դիտվում են որպես Հայաստանի Հանրապետության անկախության և ազգային անվտանգության ամրապնդման կարևոր գործոններ: Ողջունելի է, որ այս դրույթը դրված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում:

Ընդունելով Ակադեմիայի կարևոր դերը Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, գիտատեխնիկական քաղաքականության մշակման և իրականացման ասպարեզում՝ օրենքն ամրագրեց նրա՝ Հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնի կարգավիճակը, կենտրոն, որն իրականացնում է Հանրապետությունում հիմնարար հետազոտությունների համակարգումն ու փորձաքննությունը և կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուի գործառույթները:

Օրենքը հաստատեց գիտության ֆինանսավորման երեք ձև՝ թեմատիկ, բազային և նպատակային-ծրագրային: Ֆինանսավորման ծավալը հասցվեց մինչև պետբյուջեի ծախսային մասի երեք տոկոսի:

Չնայած տնտեսական լուրջ դժվարություններին՝ Ակադեմիան կարողացավ վերջին տարիներին ոչ միայն ընդհանուր առմամբ պահպանել գիտական ներուժը, այլև դրսևորել գիտական հետազոտությունների բավականին բարձր մակարդակ: Գիտական կազմակերպություններն էական ներդրում ունեցան բազմաթիվ գիտական ուղղությունների տեսական հիմքի զարգացման և կիրառական խնդիրների լուծման ասպարեզներում:

Համակարգի ինստիտուտների գործունեության արդյունքները վկայում են Ակադեմիայի գիտնականների ստեղծագործական հնարավորությունների և նրանց միջազգային բարձր վարկանիշի մասին:

Առանձին գիտական ուղղություններ ուժեղացնելու նպատակով կառավարության աջակցությամբ և միջազգային գրամաշնորհների ու այլ միջոցների հաշվին այդ տարիներին կազմակերպվեցին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Մանրէների ավանգարդման Հանրապետական կենտրոնը, Մոլեկուլի կառույցի ուսումնասիրությունների կենտրոնը, Միջազգային գիտակրթական կենտրոնը, Բժշկական գենետիկայի կենտրոնը:

Այսօր Ակադեմիան ունի 3 բաժանմունք, որոնք միավորում են շուրջ 50 գիտական հաստատություններ: Ակադեմիայի կազմի մեջ են մտնում ավելի քան երկու տասնյակ հասարակական գիտական կազմակերպություններ՝ գիտական խորհուրդներ, ընկերություններ, բաժանմունքներ:

Ակադեմիայի համակարգում ներառված են նաև իր նշանակությամբ Հանրապետությունում երկրորդ հիմնարար գիտական գրադարանը՝ միավորելով 32 ինստիտուտային մասնաճյուղ, հրատարակչական միավորումը, տպարանը, թանգարաններ և այլն:

Ակադեմիան սերտ համագործակցության մեջ է երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և բարձրագույն այլ ուսումնական հաստատությունների հետ:

Ակադեմիան հրատարակում է 13 գիտական հանդես, որոնց մի մասը՝ նաև ռուսերեն և անգլերեն թարգմանությամբ:

Ակադեմիայում աշխատում է 4391 մարդ, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ 93 իսկական անդամ (ակադեմիկոս), ՀՀ ԳԱԱ 19 թղթակից անդամ, 363 գիտության դոկտոր, 1097 գիտություն թեկնածու: Ակադեմիայի կազմում են նաև 4 պատվավոր ակադեմիկոսներ, 30 արտասահմանյան անդամներ, 48 պատվավոր դոկտորներ:

1993–1994 թթ. ստորադրվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ համագործակցության մասին պայմանագիր, Ակադեմիան դար-

ձավ Գիտական միությունների միջազգային խորհրդի (ICSU) և Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերակցության (MAAH) անդամ, ինչը զգալիորեն օգնում է միջազգային կապերի զարգացմանը և միջազգային գիտական հանրության ակտիվորեն ինտեգրվելուն:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան ծանրակշիռ ավանդ է ներդրել Սեծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության շրջանակներում միջակազգային համագործակցության ստեղծման ու զարգացման ասպարեզում: Նրա նախաձեռնությամբ 1994 թ. կազմվեց գիտական համագործակցության աշխատանքային խումբ, որի հիմքի վրա 1998 թ. ստեղծվեց Սեծովյան հետազոտությունների միջազգային կենտրոնը:

Ակադեմիան ֆինանսական օժանդակություն է ստանում միջազգային գիտական հիմնադրամների, ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ասիայի և այլ երկրների գիտական կենտրոնների հետ համագործակցության շնորհիվ:

Ակադեմիայի գիտնականները մասնակցում են այնպիսի կազմակերպությունների միջազգային գիտական ծրագրերի կատարմանը, ինչպիսիք են INTAS-ը, NATO-ն, CRDF-ը և այլն: Ընդհանուր առմամբ, Ակադեմիայի հիմնարկները վերջին երկու տարվա ընթացքում ստացել են ավելի քան 100 դրամաշնորհ: Միայն վերջին երկու տարվա ընթացքում NATO-ի գիտական ծրագրերի շրջանակներում հաստատվել է 18 նախագիծ, NATO-ի անգամ երկրներում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով կրթաթոշակ է ստացել 11 գիտնական: 2001–2002 թթ. ընթացքում Ակադեմիայի համակարգի գիտնականներին 26 դրամաշնորհ է տրամադրել Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամը՝ ANSEF-ը:

Սերտ համագործակցություն է հաստատվել Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) հետ, որը Հայաստանում ֆինանսավորում է կոնվերսիոն ծրագրեր: 1995 թ. ի վեր Ակադեմիայի գծով ստացվել է 31 դրամաշնորհ:

Ստորադրվել է Հուլիա Մեծ Բրիտանիայի Թագավորական ընկերության հետ համագործակցության մասին, որի շրջանակներում Ակադեմիայի ավելի քան 30 աշխատող գիտական հետազոտություն է կատարել Մեծ Բրիտանիայի գիտական կենտրոններում: Գիտական հետազոտությունների գերմանական ընկերության հետ համատեղ կատարվում են գիտահետազոտական աշխատանքներ ինֆորմատիկայի բնագավառում:

Ռուսաստանի ԳԱ հետ համագործակցության շրջանակներում ստեղծվել են մի շարք համատեղ գիտական կառույցներ, կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ կենսաքիմիայի, ֆիզիոլոգիայի, ընկալաբանության, հիդրոպոնիկայի, կենդանաբանության բնագավառներում, իրականացվում են գիտնականների փոխայցելություններ:

Տարիների ընթացքում կնքվել են պայմանագրեր Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Թուրքմենստանի գիտությունների ակադեմիաների հետ գիտական համագործակցության մասին, առանձին համաձայնագրեր ԱՄՆ, Չինաստանի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, սեծովյան տարածաշրջանի և այլ երկրների գիտական կենտրոնների հետ համագործակցության մասին: Երկարաձգվել է Հունգարիայի գիտությունների ակադեմիայի հետ համագործակցության մասին պայմանագիրը: Վեր-

ըին տարիներին զարգանում են գիտատեխնիկական կապերը Հնդկաստանի գիտական կենտրոնների հետ:

Ակադեմիայի Համապատասխան ինստիտուտները դարձել են Տեղեկատվության մշակման միջազգային Փեդերացիայի (IFIP), Ուղեղի հետազոտությունների միջազգային կազմակերպության (IBRO), Եվրոպական կենսաքիմիական կազմակերպության (FEBS), Միջազգային աստղագիտական միության (IAU) լիիրավ անդամ:

Վերջին տարիներին նշանակալիորեն աճել է հետաքրքրությունը Ակադեմիայի նկատմամբ՝ որպես Հանրապետության հեղինակավոր Հաստատության: Ակադեմիայում Հյուսիսամերիկայի և NATO-ի գիտական խորհրդի, INTAS-ի քարտուղարության պատվիրակությունները: ԱՊՀ անդամ երկրների մայրաքաղաքներից առաջին անգամ Երևանում տեղի ունեցավ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի տնօրենների խորհրդի նիստը և սեմինարը: Ամրապնդվել են կապերը Չինաստանի ԳԱ հետ. կայացել են մի շարք փոխայցելություններ, կնքվել է պայմանագիր ՉԺՀ դիտությունների ակադեմիայի հետ համագործակցության մասին:

Լինելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն գիտական կենտրոն՝ Ակադեմիան առաջատար տեղ է զբաղեցնում հիմնարար հետազոտությունների բնագավառում, որտեղ մի շարք ուղղությունների գծով հասել է միջազգային բարձր մակարդակի: Որպես ՀՀ կառավարության դիտական խորհրդատու՝ Ակադեմիան համագործակցում է Հանրապետության տարբեր և առաջին հերթին Առևտրի և տնտեսական զարգացման, Կրթության և դիտության, Բնապահպանության, Գյուղատնտեսության, Առողջապահության, Էներգետիկայի, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների հետ:

1990-ական թվականներին Ակադեմիայի անդամների մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության Նախագահի, երկրի վարչապետների, նախարարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են գիտության վիճակը Հայաստանում, Ակադեմիայի գործունեության կոնկրետ ուղղությունները, նրա և պետության փոխգործակցման հարցերը:

Հանրապետության կառավարությունը 2002 թ. ընդունեց Ակադեմիայի հետագա գործունեության համար հույժ կարևոր նշանակություն ունեցող որոշումներ: Հաստատվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրությունը: Ընդունվեց «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» որոշումը: Հաստատվեց գիտական կազմակերպությունների տիպային (օրինակելի) կանոնադրությունը, որը հնարավորություն տվեց այդ կազմակերպություններին վերագրանցվելու և կատարելու գույքագրում:

Այսօր անհրաժեշտ է դիտական և արտադրական հնարավորությունները միավորել պետության կողմից ֆինանսավորվող գերակա ուղղություններին, այսինքն՝ ստեղծել և զարգացնել «հիմնարար հետազոտություններ – կիրառական հետազոտություններ – փորձարարական ստրուկտուրական աշխատանքներ – արտադրություն» կապը: Նման շղթա ստեղծելու ուղի-

ներից և գիտատեխնիկական գործունեությունների գերակա ուղղություններ իրականացնելու միջոցներից մեկը տարրեր մակարդակների (պետական, տարածաշրջանային, ճյուղային) գիտատեխնիկական ծրագրերի մշակումն է և միջգերատեսչական, այդ թվում՝ Ակադեմիայի խոշոր ինստիտուտների հիմքի վրա, գիտաարտագրական միավորումների ստեղծումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնելու Ակադեմիայի ավանդը անսեսուլթան մեջ, կատարելագործելու արդյունաբերության և գիտության փոխներգործության մեխանիզմները:

Առայժմ չեն հասունացել գիտական գործունեության արդյունավետության և նրա փոխհատուցման մակարդակի բարձրացման պայմանները: Սկզբունքորեն կարևոր է գիտական հետազոտությունների արդյունքների վաճառահանման պայմանների ստեղծումը: Ինովացիոն քաղաքականությունը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով պետության և գիտաստորոշունակ արտադրանք ստեղծողների երկարատև շահերը: Ինովացիոն գործընթացների ձևավորման համար անհրաժեշտ է պետության առաջատար դերը ինովացիաների կառավարման և տնտեսական խթանման, մասնավոր ինովացիոն գործունեության սատարման, գիտության բնագավառում փոքր բիզնեսի ձևավորման և զարգացման, ինչպես նաև գիտության առավել կարևոր ոլորտների ուղղակի աջակցության մեջ: Ակադեմիան պետք է աջակցի գիտատեխնիկական այն ծրագրերի մշակմանը, որոնք ուղղված են արտահանման պոտենցիալն ապահովող սկզբունքորեն նոր տեխնոլոգիաների ստեղծմանը, արտադրանքի որակը, շրջակա միջավայրի անվտանգությունը և այլ որակական բնութագրերը բարձրացնող հիմնային տեխնոլոգիաների ներդրմանը:

Խիստ կարևոր է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր գիտություն և տեխնիկայի գծով խորհրդի կարգավիճակի ճշգրտումը և գործունեությունից ակտիվացումը:

Անհրաժեշտ է նախաձեռնել նոր քայլեր բարձրագույն դպրոցի հետ Ակադեմիայի ինտեգրման, բուհերում մասնագիտական կրթության մակարդակի բարձրացման ուղղությամբ, այդ թվում՝ շնորհալի երիտասարդների որակապես նոր բուհական պատրաստման կազմակերպումը հատուկ ծրագրերով՝ օգտագործելով ուսուցման նոր մեթոդներ, բուհական պատրաստման փուլում նրանց ներգրավելով գիտական աշխատանքի մեջ:

Ակադեմիայի դերակա խնդիրներից է Ակադեմիայի գիտնականների սոցիալական պաշտպանվածության ապահովման ծրագրերի մշակումը:

Հայաստանի գիտնականները գիտություն ապագան տեսնում են հայագիտության, մաթեմատիկայի, մեխանիկայի, աստղաֆիզիկայի, ֆիզիոլոգիայի բնագավառներում միջազգային ճանաչում ունեցող գիտական դպրոցների անվերապահ պահպանման և զարգացման մեջ: Գիտության համապատասխան բնագավառներում շեշտը առաջին հերթին պետք է դրվի բարձր տեխնոլոգիաների զարգացումն ապահովող հիմնարար հետազոտությունների համալիրի վրա: Խոսքը վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիաներին, արտադրական, մասնավորապես՝ լազերային տեխնոլոգիաներին, ոչ ավանդական եղանակների կիրառմամբ լեռնահանքային և տեխնաժին հումքի խորը վերամշակման տեխնոլոգիային, կենսատեխնոլոգիային և այլն: Հայաստանում այս բնագավառներում կատարվել են բա-

վականին աշխատանքներ, որոնք պահանջում են պետության անմիջական աջակցությունը:

Համաշխարհային միտումների ազդեցությամբ վերջին տարիներին Հայաստանում սկսել է հատուկ տեղ զբաղեցնել մոլեկուլային կենսաբանությունը (գենային ինժեներիա), ինֆորմատիկայի և համակարգչային ցանցերի, բնապահպանության, էներգետիկայի հիմնախնդիրների հետազոտությունը:

Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում կարևորվում է բախումնաբանության, տնտեսության կառավարման և Հայաստանի համար հույժ կարևոր՝ ժողովրդագրական դործոնի հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Արդի պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում երկրի ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրը: Ազգային անվտանգությունը, որը նախկինում հավասարեցվում էր միայն ռազմական անվտանգությանը, այժմ կապված է նաև տնտեսական հզորության, գիտության և կրթության բարձր մակարդակի, տեղեկատվության անվտանգության, անվտանգության սլարենային, կենսաբանական և այլ ձևերի հետ, ինչը պահանջում է լայն միջգիտական մոտեցում այդ խնդրի լուծմանը:

Վերջերս Ակադեմիա այցելեց Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Մենք այդ այցը դիտում ենք որպես առաջիկա դրական փոփոխությունների նշան և պետության ու գիտության սերտ համագործակցության սկիզբ: Նախագահը նաև ցուցաբերեց գիտնականների խնդիրների ըմբռնողություն: Նրա խոսքերը՝ «Մենք հռչակել ենք կազմակերպված պետության կառուցման գաղափարը: Հայաստանը պետք է ունենա ժամանակակից գիտական նվաճումների վրա հիմնված արդյունաբերություն, տարածաշրջանում դառնա գիտական մտքի կենտրոն», մեծ հույսեր են մեզ ներշնչում:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան եղել և շարունակում է մնալ այն մտավոր կենտրոնը, որը խթանել է հանրապետության գիտական, տնտեսական և մշակութային զարգացումը: Իր գոյության ամբողջ ժամանակահատվածում Ակադեմիան վաստակել է իր կարգավիճակը:

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 60-ամյակը պարտավորեցնող է: Այն ոչ միայն հարգանքի տուրք է գիտության երախտավորներին, անցյալի արարումներին, այլ նաև նոր մեկնարկ հայկական ակադեմիական գիտությունը նոր բարձունքների հասցնելու համար:

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 60-ամյակը պետք է դառնա Հայաստանի գիտության իսկական վերածննդի խորհրդանիշը: